



ք.Երևան

<<____>> _____ 201_թ.

(Ֆիզիկական անձի ազգանունը, անունը) _____
այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Էմ Էն Տուր» ՍՊԸ այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Շ. Շահինյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ (այսուհետ՝ Ծառայություններ)

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը, հասցեն _____

Ուղեկցող անձինք _____

Ժամանան օրը _____ 201_թ. Ավարտի օրը _____ 201_թ. Գիշերակացերի քանակը _____

Ծառայություններ (բուժում, էքսկուրսիա, գիդ, այլ ծառայություններ) _____

Տրանսպորտ (տ/մ-ի տեսակը, ժամանան և մեկնան ժամկետները, ժամերը, վայրերը) _____

Մուտնդ(կազմակերպման և մատուցման ծառայության հաճախակետությունը, պայմանները) _____

Զբոսաշրջային երթուղի _____

1.3 Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունների ժամկետի ավարտի պահին՝ երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելով:

2. Կողմերի Իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է ծառայությունը մատուցել պատշաճ որակով և պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում,

2.2 Պատվիրատուն պարտավոր է պահպանել պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,

2.3 Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու կամ պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում սպառողի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ պայմանագրի գնի 20/քսան/ տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ:

2.4 Եթե պատվիրատուն պայմանագրից հրաժարվել է 2.3 կետով նախատեսված ժամկետի խախտմամբ, կամ ընդհանրապես չի օգտվել պայմանագրով նախատեսված ծառայություններից և առկա է հյուրանոցային ծառայություն մատուցող անձի գրավոր ծանուցումը՝ հյուրանոցային ծառայությունից չօգտվելու մասին, պատվիրատուի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ պայմանագրի գնի 50 / հիսուն/ տոկոսի չափով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, որից հյուրանոցի արժեքը _____ (_____) ՀՀ դրամ:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1 կետում նշված պայմանագրի գինը վճարվում է միանգամից կամ ամենամսյա պարբերականությամբ՝ ընդ որում վերջին վճարումը կատարվում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը, իսկ առաջին վճարումը կատարվում է պատվիրատուի կողմից պայմանագիրը ստորագրելուց հետո 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Կատարողի՝ օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

4.2 Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությանների հետևանքով առաջացած նյութական վնասի պատասխանատվությամբ:

5. Անադրահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է Ֆորս-Մաժորի հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունը, քաղաքական հուզումները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների կամ ՀՀ օրենսդրության միջոցով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Պայմանագրում ցանկացած փոփոխություն կատարվում է գրավոր և ստորագրված երկու կողմերի կողմից:

7.2 Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունցող երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմաններ և ստորագրությունները

Պատվիրատու

Ա/Ա _____

Հասցե՝ _____

Անձ. _____

Հեռ. _____

Հ/Հ _____

ստորագրություն

Կատարող

<<Էմ Էն Տուր>> ՍՊԸ Ընկերություն

Հասցե՝ ՀՀ, ք. Ստեփանավան, Պողոսյան 20

h/h 1510024128160100 բանկ Արարատբանկ ԲԲԸ

հեռ.՝ 055001310, Էլ-փոստ- mn.tour@mail.ru

ՀՎՀՀ՝ 00251142

Տնօրեն

Շ. Շահինյան

ԿՏ.